



2006թ ՀՆԱ-ի Աճը ԵՎ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՃՅՈՒՂԵՐԸ

Անվանական արտահայտությամբ 2006թ. ՀՆԱ-ն կազմել է 2665036.6մլն դրամ 2005թ. նույն ժամանակահատվածի 2228027.5մլն դրամի դիմաց, իսկ ՀՆԱ-ի ինդեքս-դեֆլատորը 2006թ. կազմել է 104.8% 2005թ. 103.1%-ի դիմաց: Այս ցուցանիշը վկայում է այն մասին, որ հաշվետու ժամանակահատվածում գները աճել են ավելի բարձր տեմպով, այսինքն ինֆլացիայի մակարդակը բարձրացել է 1.7տոկոսային կետով: 2006թ. ՀՆԱ-ի աճի տեմպը (113.4%) նվազել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատությամբ (114.0%) 0.6 տոկոսային կետով: Պետք է նշել, որ արձանագրված աճի նվազեցումը արդյունաբերության (2005թ. -1.4, 2006թ. -0.2) և գյուղատնտեսության (2005թ.-2.5, 2006թ. -0.1) ճյուղերում արձանագրված աճի տեմպերի նվազեցման արդյունքն է:

Տնտեսության տարբեր ճյուղերի մասնաբաժինը 2005-2006թ.թ. տնտեսական աճում (%)





2006թ. ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքում մեծացել է շինարարության տեսակարար կշիռը, կազմելով՝ 26.7%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 21,7%-ի դիմաց, ինչը չի կարելի ասել մյուս բազային ճյուղերի մասին՝ հատկապես արդյունաբերության, որի

տեսակարար կշիռը ՀՆԱ-ի ճյուղային կառուցվածքում կազմել է 15.1% 2005թ. 18.8 % դիմաց:

2005-2006թ.թ.

ՀՆԱ-ի կառուցվածքն՝ ըստ տնտեսության ճյուղերի (%)



ՀՆԱ-ի կառուցվածքը և հավելաճին նպաստման չափը (%)

	2005 թ.		2006թ.	
	տոկոսային կես	%	տոկոսային կես	%
արդյունաբերություն	1.4	18.8	-0.2	15.1
շինարարություն	5.5	21.7	8.1	26.7
գյուղատնտեսություն	2.5	18.7	0.1	17.7
տրանսպորտ և կապ	0.8	5.6	0,9	5.9
առևտուր և հանրային սնունդ	1.1	10.5	1,2	10,2
ընդամենը այլ ճյուղեր	2.7	24.7	3.3	24.4
ՀՆԱ-ն շուկայական գներով	14.0	100.0	13.4	100

Արդյունաբերություն

2006թ. արդյունաբերական արտադրանքի ծավալը կազմել է 643503.7 մլն դրամ 2005թ. 651393.0 մլն դրամի դիմաց, որի հետևանքով աճի տեմպերը նվազել են 2005թ. համապատասխան ցուցանիշի համեմատությամբ 8.5 տոկոսային կետով:

Ի տարբերություն նախորդ տարիների, երբ ՀՆԱ-ի հավելվածի կառուցվածքում մեծ էր արդյունաբերության ճյուղի մասնաբաժինը, 2004-2005թ.թ. ընթացքում նկատվում է աճի տեմպի նվազում, իսկ 2006թ. նույնիսկ անկում: ՀՆԱ-ի հավելվածում արդյունաբերության նպաստման չափը 2003թ. 2.9 տոկոսային կետի դիմաց 2004-2006թթ. նույն ժամանակահատվածում գրանցվել է համապատասխանաբար, 0.4, 1.4 և -0.2 տոկոսային կետ:

Արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալը՝ առանց էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության 2006թ. կազմել է 531312.2 մլն.դրամ 2005թ. 537158.8 մլն.դրամի դիմաց, որը կազմել է 2005թ. համապատասխան ցուցանիշի 99.3% է և նվազել է 7.7 տոկոսային կետով:

Մշակող արդյունաբերություն

Մշակող արդյունաբերությունը ամենամեծ տեսակարար կշիռ ունեցող ենթաճյուղն է (2006թ. 65,0%) արդյունաբերական արտադրանքի կառուցվածքում: Մշակող արդյունաբերության ենթաճյուղում 2006թ. արձանագրվել է արտադրանքի ծավալի նվազում կազմելով՝ 97.9%, իսկ նախորդ տարվա համեմատությամբ աճի տեմպը նվազել է 11.8 տոկոսային կետով:


Եթե դիտարկենք մշակող արդյունաբերության առավել խոշոր ենթաբաժինների 2006թ. զարգացումները, առաջին իսկ հայացքից աչքի է ընկնում մշակող արդյունաբերության կառուցվածքում ամենախոշոր տեղ զբաղեցնող, սննդի արդյունաբերության տեսակարար կշռի բարձրացումը 2.2 տոկոսային կետով, ինչը պայմանավորված է ոլորտում մրցունակ արտադրանքի թողարկմամբ, որի արդյունքում հնարավոր դարձավ ոչ միայն զգալիորեն փոխարինել ներմուծումը տեղական արտադրանքով, այլ նաև ավելացնել ենթաճյուղի արտահանման ծավալները: Այս ոլորտում աճի տեմպերը կայուն են, սակայն վերջին տարիներին նկատվում է աճի դանդաղեցման միտում:

2006թ. սննդամթերքի, ներառյալ խմիչքները, արտադրության ծավալի աճի տեմպը կազմել է 104.2%, որը 0.1 տոկոսային կետով գերազանցում է 2005թ. համապատասխան ցուցանիշը, դա թերևս պայմանավորված է դրամի փոխարժեքի ոչ բարենպաստ պայմաններով:

**Մշակող արդյունաբերության հիմնական ենթաբաժինների
կշիռները 2004-2006թթ.
ընդամենը մշակող արդյունաբերությունում (%)**

Մշակող արդյունաբերության հիմնական ենթաբաժինները	2004թ.	2005թ.	2006թ.
սննդամթերք, ներառյալ խմիչքներ	49.3	43.2	45.4
մետաղագործական արդյունաբերություն	20.5	29.8	26.2
ոսկերչական արտադրատեսակի արտադրություն	4.9	3.3	1,6
ծխախոտային արտադրատեսակներ	4.4	3.8	3.5
քիմիական արդյունաբերությւ	3.2	3.7	3.5
այլ ոչ մետաղական հանքայի արտադրատեսակներ	5.4	5.6	7.5

**Սննդամթերքի արտադրության (ներառյալ խմիչքները)
ծավալի աճի դինամիկան (%)**



2006թ. ամենամեծ աճի տեմպերը գրանցվել է կաշվի, կաշվե արտադրատեսակների, կոշկեղենի արտադրության ոլորտում կազմելով 2005թ. նույն ժամանակահատվածի համեմատությամբ 161.9%, որը 64.1 տոկոսային կետով գերազանցում է նախորդ տարվա նույն ցուցանիշը: ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից իրականացվող


մոնիտորինգի տվյալներով դա հնարավոր է դարձել հիմնականում հետևյալ ձեռնարկությունների գործունեության արդյունքում՝ «Կաշի» ԲԲԸ (435.3%), «Կաշվե-գալանտեր ֆ-կա» ԲԲԸ(425.2%), կոշիկի «Լյուքս» ԲԲԸ(1107.9%):

Պատրաստի մետաղե արտադրատեսակների արտադրության ոլորտում արտադրանքի ֆիզիկական ծավալի ինդեքսը կազմել է 127.1%: Մշակող արդյունաբերության մեջ արտադրության աճի տեմպերով (122.7%) երրորդ տեղում է «բնափայտի մշակում և փայտե արտադրատեսակների արտադրություն» ենթաբաժինը, որը ըստ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից իրականացվող մոնիտորինգի տվյալների հետևյալ ձեռնարկությունների գործունեության արդյունքն է՝ «Զեյթունի կահույքի» ԲԲԸ 1852.4%, «Երևան-կահույք» ԲԲԸ 119.2%, «ՎաԲա» ՍՊԸ 308.8%, «Սալմաստ Կահույք» ՍՊԸ 106.4%:

Մշակող արդյունաբերությունում երկրորդ ամենամեծ կշիռ ունեցող ենթաբաժնի՝ մետաղագործական արդյունաբերության դերը մշակող արդյունաբերության կառուցվածքում նվազել է՝ կազմելով 26.2% 2005թ-ի 29.8% դիմաց:

2006թ. մշակող արդյունաբերության ենթաճյուղում առանձնանում են երկու ենթաբաժիններ՝ սննդամթերքի (ներառյալ խմիչքները) արտադրությունը և մետաղագործական արդյունաբերությունը, որոնց ընդհանուր կշիռը կազմում է մշակող արդյունաբերության գրեթե 3/4-րդ մասը:

Մշակող արդյունաբերության կառուցվածքը ըստ ենթաբաժինների 2005-2006թ.թ. (%)



2006թ. մշակող արդյունաբերության կառուցվածքում 7.5 % տեսակարար կշիռ ունեցող «այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրություն» ենթաբաժնում արձանագրվել է 109.6% աճ: Սա պայմանավորված է շինարարության աճի առաջանցիկ տեմպերով: Մյուս ենթաճյուղերն առանձին վերցրած մշակող արդյունաբերության կառուցվածքում չեն գերազանցում 4.6%-ի սահմանը:

Միևնույն ժամանակ 2006թ. աճի տեմպերի նվազում է արձանագրվել քիմիական արդյունաբերության և ոսկերչական արտադրատեսակների արտադրության ենթաճյուղերում կազմելով համապատասխանաբար՝ 87.6% և 75.7% 2005թ. 157.1% և 97.4% դիմաց, որի հետևանքով մշակող արդյունաբերության կառուցվածքում խիստ նվազել է ոսկերչական արտադրատեսակների արտադրության ենթաճյուղի տեսակարար կշիռը 2004թ. 4.9%-ից նվազելով մինչև 1.6% 2006թ: ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության 2006թ. մոնիտորինգի տվյալներով ակնագործության և ոսկերչության ենթաճյուղում գրանցվել է աճի տեմպերի նվազում, որը պայմանավորված է այդ ոլորտի բոլոր ձեռնարկությունների ապրանքային արտադրանքի ծավալների նվազմամբ, բացառությամբ հետևյալ ձեռնարկությունների՝ «Էյ Էլ Թի» ՍՊԸ, «Չորագյուղ» ԱԿ և «Արևակն» ՍՊԸ, որտեղ արձանագրվել է համապատասխանաբար 426.6%, 232.1%, 116.3% աճի տեմպեր: Ոլորտի մնացած ընկերություններում ապրանքային արտադրանքի ծավալների նվազումը կապված է թանկարժեք քարերի միջազգային շուկայում մոտ 2 տարի տիրող ճգնաժամի, ինչպես նաև դրամի արժեվորման հետ, ինչի հետևանքով նվազել է ենթաճյուղի մրցունակությունը:

Արդյունաբերական արտադրանքի արտադրությունն ըստ հանրապետության մարզերի դիտարկելիս նկատելի են հետևյալ զարգացումները՝

2006թ. արդյունաբերական արտադրության ամենամեծ աճը գրանցվել է Տավուշի մարզում (108.8%), ի հաշիվ էլեկտրաէներգիայի արտադրության (194.0%), հանքագործական արդյունաբերության և այլ ճյուղերի (178.2%) և սննդամթերքի, ներառյալ խմիչքները արտադրության (104.6%): Արդյունաբերական արտադրանքի արտադրության աճի տեմպերով երկրորդ և երրորդ տեղերում են համապատասխանաբար Մյունիքի մարզը (107.6%) հիմնականում ի հաշիվ մետաղե հանքաքարերի արդյունահանման, մեքենաների և սարքավորումների (144.8%) և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրության 124.6% և Արարատի մարզը (107.2%) հիմնականում ի հաշիվ հանքագործական արդյունաբերության այլ ճյուղերի (149.4%), բնափայտի մշակման և փայտե արտադրատեսակների արտադրության (126.9%), մետաղագործական արդյունաբերության (126.3%):

Իսկ արդյունաբերական արտադրանքի արտադրության համեմատաբար ցածր աճի տեմպեր են գրանցվել Գեղարքունիքի և Կոտայքի մարզերում՝ համապատասխանաբար 87.2% և 87.5%: Համաձայն, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության կողմից իրականացվող 2006թ. մոնիտորինգի տվյալների, մշակող արդյունաբերության մեջ արտադրության աճ է արձանագրվել մի շարք ձեռնարկություններում, որոնցից են՝ «Հիդրոհաղորդակ»ԲԲԸ 197.8%, «Էլեկտրոն»ԲԲԸ 150.0%, «Չարենցավանի գործիքաշինական գործարան» ԲԲԸ 128.9%, Չարենցավանի Արմավտո ԲԲԸ 135.8%, «Հայքիմմեքենա» ԲԲԸ 262.5%, «ԵՐԱՄ» ԲԲԸ 209.9%, «Մարս» ՓԲԸ 126.9%, «Կոննեկտ» ՓԲԸ 323.7%, «Անալիտսարք» ՓԲԸ 152.7%, «Հայէլեկտրամեքենա» ՓԲԸ 193.2%, «Հայկաբել» ԲԲԸ 235.6%, «Ստեփանավանի ԲՀԷՄ» ԲԲԸ 631.6%, Սևանի Կատ.Սարքեր ԲԲԸ 198.4%, «Էջմ. Պլաստմասսաներ» ԲԲԸ 121.6%, «Պրոմեթեյ-Խիմպրոմ» ՓԲԸ 228.2%, «Շեն Կոնցեռն» ՍՊԸ 147.6%,«Լիկվոր» ՍՊԸ 137.6%, «Արագած» ԲԲԸ 206,1%, «Էն Վայ Էյ ԴԻ»ՍՊԸ 216.7%, «Ջրաշող» ՓԲԸ 140.8%, Գ.յ.«Արշալույս» ԲԲԸ 147.7%, Սպիտ«Վանուի» ԲԲԸ 144.5% և այլն:

Հանքագործական արդյունաբերություն

Ի տարբերություն 2005թ., երբ արդյունաբերության ճյուղի բոլոր հատվածներում, բացառությամբ հանքագործական արդյունաբերության, արձանագրվել էին կայուն աճի տեմպեր 2006թ. միայն հանքագործական արդյունաբերության հատվածում է առկա աճի տեմպերի բարձրացում 10.6 տոկոսային կետով, որին նպաստել է ոչ միայն «մետաղե հանքաքարի արդյունահանում» հատվածը՝ տեսակարար կշիռը հանքագործական արդյունաբերության մեջ կազմում է՝ 98.0%-ից ավելին, այլ նաև «հանքագործական արդյունաբերության այլ ճյուղեր» հատվածը, որի աճի տեմպը կազմել է 129.6%, գերազանցելով 2005թ. նույն ցուցանիշը 24.8 տոկոսային կետով: Արձանագրված փաստը բնորոշ է այս ենթահատվածի արդյունահանման գրեթե բոլոր տեսակներին, որը սերտորեն կապված է շինարարության ճյուղի զարգացման առաջանցիկ տեմպերի հետ:

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության 2006թ. մոնիտորինգի տվյալներով այս ոլորտում բարձր ցուցանիշներ են արձանագրվել հետևյալ ձեռնարկություններում՝ «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ (943.5%), «AMP» ՍՊԸ (130.4%), «Ազարակի ՊՄԿ» ՓԲԸ (127.5%), «Զանգեզուրի ՊՄԿ»ՓԲԸ (107.4%), «Ար-Ալ» ՀԶ (107.4%) :

Շինարարություն

Այս ոլորտում վերջին տարիներին դիտվում է կայուն աճ, ինչը բնորոշ է զարգացող տնտեսությունների համար: 2005թ. 426399.4 մլն դրամ իրականացված շինարարության ծավալի դիմաց՝ 2006թ. իրականացվել է՝ 623111.5 մլն դրամ ծավալի աշխատանք և նախորդ տարվա միևնույն ժամանակահատվածի նկատմամբ աճը կազմել է 137.1%: Մյուս կողմից իրականացված շինարարությունը, ըստ ֆինանսավորման աղբյուրների դիտարկելիս ակնհայտ է կառուցվածքի փոփոխությունը:

Վերջին տարիներին շարունակաբար աճում է մասնավոր ներդրումների հոսքը դեպի շինարարություն, մասնավորապես. 2006թ. մասնավոր ներդրումների բաժինը շինարարության ծախսերի մեջ ունեցել է աճի միտում և կազմել է համապատասխանաբար 564274.5 մլն դրամ և 90.6%, 2005թ.՝ 378857.2 մլն դրամ և 88.9% դիմաց, ինչը 1.7 տոկոսային կետով ավելի բարձր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից: Չնայած Լինսի հիմնադրամի կողմից ֆինանսավորման ընդհատմանը, շինարարության ծավալի բացարձակ աճը շարունակվում է հիմնականում մասնավոր ներդրումների հաշվին՝ 2006թ. մասնավոր ներդրումների աճը 2005թ. համեմատ կազմել է՝ 148.9%:

2006թ. շահագործման է հանձնվել 365721 քառ.մ. ընդհանուր մակերեսով 788 նոր բնակելի շենք, աճի տեմպը 2005թ. նկատմամբ կազմել է 106.6%: Այս ցուցանիշը՝ ըստ մարզերի երևում է հետևյալ աղյուսակում:

Հանրապետության մարզերում շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը

	Բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը, քառ.մ		2006թ. 2005թ. նկատմամբ,%
	2006թ.	2005թ.	
ք. Երևան	298486	252923	118.0
Արագածոտն	6150	11784	52.2
Արարատ	9082	12277	74.0
Արմավիր	10270	18170	56.5
Վայոց ձոր	935	----	----
Լոռի	15027	22713	66.2

Գոտայք	5271	11230	46.9
Շիրակ	8868	8124	109.2
Սյունիք	3235	1182	2.7 անգամ
Գեղարքունիք	5910	3435	172.1
Տավուշ	2487	1240	2 անգամ
Ընդամենը ՀՀ	365721	343078	106.6

Ադետի գոտում 2006թ. ֆինանսավորման տարբեր աղբյուրներով իրականացվել է 35439.4 մլն.դրամի շինարարություն, որը 2005թ. համեմատ աճել է, կազմելով 188.1%: Այս վերելքի պատճառը ներդրումների աճն է հատկապես երկու ֆինանսավորման աղբյուրներից՝ կազմակերպությունների միջոցներ (2005թ. համեմատ աճը կազմել է 4.7 անգամ), պետական բյուջե (2005թ. համեմատ աճը կազմել է 117.8%):

Գյուղատնտեսություն

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը բացարձակ արժեքով 2006թ. ընթացիկ գներով կազմել է 555.9 մլրդ դրամ, որը 2005թ. նույն ժամանակահատվածի մակարդակը գերազանցել է 0.4%-ով: Գյուղատնտեսության աճին նպաստել են բուսաբուծությունը և անասնապահությունը, համապատասխանաբար ապահովելով՝ 4.4% և 10.4% աճ:

2006թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալը նվազել է միայն Երևանում կազմելով 5.5 մլրդ դրամ, 2005թ. 5.9 մլրդ. դրամի դիմաց, իսկ առավելագույն աճը գրանցվել է Գեղարքունիքի մարզում, կազմելով՝ 80.0 մլրդ դրամ, 2005թ. 69.5 մլրդ դրամի դիմաց: 2005-2006թթ. գյուղատնտեսության համախառն արտադրանքը մարզային կտրվածքով բերված է հետևյալ աղյուսակում՝

	Համախառն արտադրանքը մլրդ. դրամ		Տեսակարար կշիռը, %	
	2005թ.	2006թ.	2005թ.	2006թ.
ք.Երևան	5.9	5.5	1.2	1.0
Արագածոտն	35.5	41.1	7.2	7.4

Արարատ	64.7	72.3	13.1	13.0
Արմավիր	74.9	83.5	15.2	15.0
Գեղարքունիք	69.5	80.0	14.1	14.4
Լոռի	51.8	58.4	10.5	10.5
Կոտայք	45.3	50.0	9.2	9.0
Շիրակ	49.3	56.7	10.0	10.2
Սյունիք	46.8	53.4	9.5	9.6
Վայոց Ձոր	22.2	24.4	4.5	4.4
Տավուշ	27.1	30.6	5.5	5.5

Անասնաբուժական մթերքների արտադրությունը 2006թ. մարզային կտրվածքով ունի հետևյալ պատկերը.

2006թ. անասունի և թռչնի արտադրությամբ առաջատար դիրք են զբաղեցնում՝ Գեղարքունիքի մարզը (18.7 հազ.տոննա), Շիրակի մարզը (16.5 հազ.տոննա), Արագածոտնի մարզը (13.0 հազ. տոննա), Կոտայքի մարզը (12.3 հազ. տոննա), Լոռու մարզը (11.9 հազ.տոննա):

Կաթի արտադրությամբ՝ Գեղարքունիքի մարզը (110.2 հազ.տոննա), Շիրակի մարզը (92.6 հազ.տոննա), Լոռու մարզը (73.0 հազ.տոննա), Արագածոտնի մարզը (71.5 հազ.տոննա):

Չվի արտադրությամբ՝ Կոտայքի մարզը (198.1 մլն.հատ), որը մի քանի անգամ գերազանցում է ձվի արտադրությանը այլ մարզերում:

Կապ

Կապը, որպես տնտեսության ճյուղ, վերջին տարիներին զարգացման արագ միտում է ցուցադրում: 2006թ. կապի ծառայություններից ստացված հասույթը կազմել է՝ 126158.6 մլն դրամ և արձանագրվել է ճյուղի ծավալի աճ կազմելով՝ 136.9% 2005թ. համեմատությամբ, ինչը 10.8 տոկոսային կետով ավելի բարձր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից:

2006թ. կապի ծառայություններից ստացված հասույթի կառուցվածքում ամենամեծ աճը գրանցվել է շարժական կապի ծառայությունների ոլորտում կազմելով՝ 189.5% 2005թ.

համեմատությամբ, ինչը 28.2 տոկոսային կետով ավելի բարձր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից:

2005-2006թթ.. շարժական կապի ծառայություններից ստացված հասույթի նման աճը հիմնականում պայմանավորված է բջջային կապի ծառայությունների ոլորտում մեկ այլ օպերատորի շուկա մուտք գործելով:

Տրանսպորտ

2006թ. ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը կազմել է՝ 9659.0 հազ. տոննա և արձանագրվել է ճյուղի ծավալի աճ կազմելով՝ 116.6% 2005թ. համեմատությամբ, ինչը 6.4 տոկոսային կետով ավելի ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից:

Երկաթուղային տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը կազմել է՝ 9659.0 հազ. տոննա և արձանագրվել է ենթաճյուղի ծավալի աճ կազմելով՝ 104.1% 2005թ. համեմատությամբ, ինչը 4.8 տոկոսային կետով ավելի բարձր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից:

Ավտոմոբիլային տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը կազմել է 5730.4 հազ. տոննա և արձանագրվել է ենթաճյուղի ծավալի աճ կազմելով՝ 127.9% 2005թ. համեմատությամբ, ինչը 14.2 տոկոսային կետով ավելի ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից:

Օդային տրանսպորտի բեռնափոխադրումների ծավալը կազմել է 9.3 հազ. տոննա և 2005թ. համեմատությամբ չի փոփոխվել:

2006թ. փոփոխվել է ընդհանուր օգտագործման տրանսպորտի բեռնափոխադրումների կառուցվածքը ըստ արտահանման, ներկրման և ներհանրապետական բեռնափոխադրումների:

Տրանսպորտ	2005թ.				2006թ.			
	ընդամենը	արտահանում	ներկրում	ներհանրապետական	ընդամենը	արտահանում	ներկրում	ներհանրապետական
երկաթուղային (հազ. տոննա)	2612.3	425.7	1107.5	1079.1	2719.6	513.2	1274.4	932.0
ավտոմոբիլային (հազ. տոննա)	4479.7	265.2	546.9	3667.6	5730.4	248.1	596.3	4886.0
օդային (հազ. տոննա)	9.3	3.7	5.6	-	9.3	4.1	5.2	-

2006թ. ընդհանուր օգտագործման երկաթուղային տրանսպորտով իրականացրած բեռնափոխադրումների կառուցվածքում 2005թ. համեմատությամբ արտահանման և ներկրման տեսակարար կշիռը աճել է՝ համապատասխանաբար 19% և 47%, իսկ ներհանրապետական բեռնափոխադրումների տեսակարար կշիռը նվազել է կազմելով 34%:

2006թ. ավտոմոբիլային տրանսպորտով իրականացրած բեռնափոխադրումների կառուցվածքում 2005թ. համեմատությամբ ներհանրապետական բեռնափոխադրումների տեսակարար կշիռը աճել է՝ կազմելով 84%, իսկ արտահանման և ներկրման բեռնափոխադրումների տեսակարար կշիռը նվազել է՝ կազմելով համապատասխանաբար 4% և 10%:

2006թ. օդային տրանսպորտով իրականացրած բեռնափոխադրումների կառուցվածքում 2005թ. համեմատությամբ արտահանվող բեռների տեսակարար կշիռը աճել է՝ կազմելով 44%, իսկ ներկրվող բեռների տեսակարար կշիռը նվազել է՝ կազմելով 56%:

2006թ. բեռնափոխադրումների կառուցվածքում ակնհայտ է, որ ավտոմոբիլային տրանսպորտը առաջատար դեր է ստանձնում ներհանրապետական բեռնափոխադրումների ենթաճյուղում:

Գործազրկություն

2006թ. տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը կազմել է՝ 1201.3հազ. մարդ, 2005թ. 1195.8 հազ. մարդու դիմաց, որոնցից 2006թ. 88.9 հազ. մարդ կամ 7.4%-ը, իսկ 2005թ. 98.1 հազ. մարդ կամ 8.2% պաշտոնապես ճանաչվել են գործազուրկ, հետևաբար 2006թ. 5.5 հազ. մարդով աճել է տնտեսապես ակտիվ բնակչության թվաքանակը, բայց միևնույն ժամանակ գործազրկության մակարդակը 0.8 տոկոսային կետով ավելի ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից:

2006թ. տնտեսապես ակտիվ տղամարդկանց 4.0% պաշտոնապես ճանաչվել են գործազուրկ, 2005թ. նույն ցուցանիշի 4.6% դիմաց, ինչը 0.6 տոկոսային կետով ավելի ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից: 2006թ. տնտեսապես ակտիվ կանանց 11.1% պաշտոնապես ճանաչվել են գործազուրկ, 2005թ. 12.1% դիմաց, ինչը 1.0 տոկոսային կետով ավելի ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից:

2006թ. գործազրկության մակարդակը 2005թ. նկատմամբ մի շարք մարզերում աճել է, կազմելով՝ Տավուշում՝ 136.4%, Գեղարքունիքում՝ 120.0%, Արագածոտնում՝ 115.4%, միևնույն ժամանակ գործազրկության մակարդակի նվազում է արձանագրվել Երևանում՝ 79.5%,

Արարատում՝ 87.1%, Արմավիրում՝ 85.3%, Լոռու մարզում՝ 93.2% և Կոտայքում՝ 95.2%: 2006թ. Շիրակի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում գործազրկության ցուցանիշը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից գրեթե չի փոփոխվել: